# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Եղեգի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի **Հայոց լեզու և գրականություն (27,5 դասաժամ), Ռուսաց լեզու (17,25 դասաժամ) ), Աշխարհագրություն (7,5 դասաժամ) , Ֆիզկուլտուրա (17,75 դասաժամ) , Դասվար I դասարան (20 դասաժամ), դասվար III (9 դասաժամ), դասվար IV (9,5 դասաժամ), Հասարակագիտություն (6,75 դասաժամ), Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (5,75 դասաժամ), ՀԵՊ (3,25 դասաժամ),** ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ-ի օգոստոսի 31-ից մինչև 2023թ-ի սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Սյյունիքի մարզի «Եղեգի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ Կապան համայնք, Եղեգ բնակավայր, Ւփողոց, 25/1 շենք : Տեղեկությունների համար զանգահարել 093968673, 096968673 հեռախոսահամարներով: